Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 24-ի նիստի N 36
արձանագրային որոշման

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

I. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի № 258-Ա/1 հրամանով ստեղծված աշխատանքային խմբի և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կողմից:

2. Ծրագիրը ֆիզիկական դաստիարակության համակարգի ծրագրային և նորմատիվային հիմքն է:

3. Ծրագրի հիմնական նպատակն է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածումը՝ դրա մեջ ընդգրկելով բնակչության տարբեր տարիքային խմբերի՝ ակնկալելով մասնակիցների թվաքանակի աճ: Ծրագրի նպատակն է նաև նպաստել Հայաստանի Հանրապետության բնակչության աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, բարոյակամային և ֆիզիկական որակների բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, առողջության ամրապնդմանը, երկարակեցության ապահովմանը և ռազմահայրենասիրական ոգու բարձրացմանը:

4. Ծրագրի խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման ապահովումը,

2) Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացումը,

3) Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում առողջական անհրաժեշտ վիճակի և աշխատունակության բարձրացումը, հայրենիքի պաշտպանության համար անհրաժեշտ պատրաստականության և ֆիզիկական պատրաստվածության ապահովումը,

4) Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայով, սպորտով գիտակցաբար զբաղվելու և առողջ ապրելակերպ վարելու, հանրապետության բնակիչների տարբեր տարիքային խմբերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պահանջի ձևավորումը և խթանումը,

5) հասարակության շրջանում ինքնուրույն ֆիզկուլտուրային պարապմունքների մեթոդների, միջոցների և մարզումների ձևերի տիրապետումն ապահովելը:

5. Ծրագիրը բաղկացած է 10 աստիճաններից և ներառում է հետևյալ տարիքային խմբերը՝

1) առաջին աստիճան՝ 6-9 տարեկան,
2) երկրորդ աստիճան՝ 10-11 տարեկան,
3) երրորդ աստիճան՝ 12-13 տարեկան,
4) չորրորդ աստիճան՝ 14-15 տարեկան,
5) հինգերորդ աստիճան՝ 16-17 տարեկան,
6) վեցերորդ աստիճան՝ 18-29 տարեկան,
7) յոթերորդ աստիճան՝ 30-39 տարեկան,
8) ութերորդ աստիճան՝ 40-49 տարեկան,
9) իններորդ աստիճան՝ 50-59 տարեկան,
10) տասներորդ աստիճան՝ 60 և բարձր տարիք:

6. Ծրագրի յուրաքանչյուր աստիճան կազմված է հետևյալ երեք հիմնական բաժիններից՝

1) գիտելիքներ (անհրաժեշտ հմտություններ),
2) շարժողական ռեժիմի պահանջներ,
3) ստուգարքի տեսակներ և նորմատիվներ:

7. «Գիտելիքներ» բաժինը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում անհրաժեշտ գիտելիքների տրամադրում:

8. «Շարժողական ռեժիմի պահանջներ» բաժինը սահմանում է ֆիզիկական վարժությունների մեկշաբաթյա նվազագույն շարժողական ծավալը, որը խորհուրդ է տրվում կատարել նորմատիվների հանձնմանը նախապատրաստվելիս:

9. «Ստուգարքի տեսակներ և նորմատիվներ» բաժինը բովանդակում է ստուգարքի այն տեսակները (թեստերը), որոնք թույլ են տալիս որոշելու շարժողական ունակությունների զարգացման բազմակողմանիությունը և կիրառական հմտություններին տիրապետելու աստիճանը: Նորմատիվների օգնությամբ գնահատվում է մարդու շարժողական ունակությունների զարգացման մակարդակը (արագություն, դիմացկունություն, ուժ, ճարպկություն և այլն)՝ նրա տարիքին և սեռին համապատասխան: Ստուգարքների տեսակները տարանջատվում են պարտադիր հանձնման ենթակա նորմատիվների և ըստ ցանկության կատարման նորմատիվների:

10. Այն անձինք, ովքեր հանձնել են ծրագրով սահմանված ստուգարքները և տիրապետում են անհրաժեշտ գիտելիքների ու կարողությունների, պարգևատրվում են համապատասխան կարգի կրծքանշանով ու հավաստագրով: Կմշակվեն և կկիրառվեն խրախուսման այլ տեսակներ ևս:

11. Ծրագրում ներառված նորմատիվները նախատեսված են զարգացնելու անձի շարժողական ունակությունները (մկանային ուժ, դիմացկունություն, արագաշարժություն և այլն):

12. Ծրագիրը նախատեսում է Հայաստանի Հանրապետության բնակչության տարբեր տարիքային խմբերի (6-ից մինչև 60 տարեկան և բարձր) ֆիզիկական համապատասխան պատրաստություն և նորմատիվների կատարում: Նորմատիվները սահմանում են դժվարության երկու մակարդակ, որոնց կատարման համար համապատասխանաբար տրվում են ոսկե կրծքանշան և հավաստագրեր: Բնակչության տարբեր խմբերի համար կմշակվեն և կհաստատվեն խրախուսման այլ մեխանիզմներ ևս:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ

13. Ծրագիրն իրականացնելու է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման, Հայաստանի Հանրապետության առողջապահության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունների հետ:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագիրն իրականացվելու է երկու փուլով:

1) Փորձնական՝ առաջին փուլն իրականացվելու է 2017-2018 և 2018-2019 ուսումնական տարիների ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների շրջանում («Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան և Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան):

2) Ծրագիրն ամբողջովին կգործի 2020 թվականից:

15. Ծրագրի փուլային ներդրման գործընթացը համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը:

16. Ծրագրի փուլային ներդրման գործընթացի կազմակերպման, անցկացման և արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը:

17. Նորմատիվների կատարումը թույլատրվում է այն անձանց, որոնք պարբերաբար զբաղվում են ֆիզիկական կուլտուրայով և սպորտով, այդ թվում նաև ինքնուրույն՝ հիմք ընդունելով բժշկական զննման արդյունքները:

18. Ծրագրի նորմատիվների կատարման ֆիզիկական պատրաստվածության մակարդակի պահանջները հաշվի են առնվում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի կրթական ծրագրերում՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ:

IV. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

19. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության 2017-2019 թվականների պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում եկամուտների և ծախսերի ավելացում չի նախատեսվում: Փորձնական փուլն իրականացվելու է 2017-2018 և 2018-2019 ուսումնական տարիներին՝ կրթական ծրագրի շրջանակներում:

20. Ծրագրի ֆինանսական գնահատականը հնարավոր կլինի տալ ծրագրի փորձնական փուլի արդյունքներն ամփոփելուց և վերլուծելուց հետո՝ 2020 թվականին:

21. Ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն է: Ֆինանսավորման աղբյուրներ կարող են լինել դրամաշնորհները, բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները, հովանավորչական հատկացումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

V. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

22. Ակնկալվող արդյունքներն են՝

1) Մասսայական սպորտի և առողջ ապրելակերպ վարելու կարևորում,

2) Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայով, սպորտով գիտակցաբար զբաղվելու և առողջ ապրելակերպ վարելու, հանրապետության բնակիչների տարբեր տարիքային խմբերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պահանջի ձևավորում,

3) բնակչության շրջանում հայրենիքի պաշտպանության համար անհրաժեշտ պատրաստականության և ֆիզիկական պատրաստվածության ապահովում: